ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

8-ը դեկտեմբերի, 2022թ.

Կարծիք

Նարե Գագիկի Մկրտչյանի «Թրումեն Կապոտեի ոչ ֆիկցիոնալ ստեղծագործությունների ժանրային ինքնատիպությունը» թեմայով, ներկայացված Ժ.01.07- «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Գրական աշխարհը ներկայումս փոխվում է նույնքան արագ, որքան մշակույթի և գիտության ցանկացած այլ բնագավառ: Ժամանակակից գրականության մեջ առաջին պլան է մղվում «ոչ գեղարվեստական» արձակը, որը դարձել է հասարակության սոցիալական փոփոխությունների ցուցիչ: Տ.Կապոտեի «Սառնասրտորեն» /«In cold blood»/ վեպը նման գրականության առաջին օրինակներից է, որն աչքի ընկավ նոր պատմողական ոճով և առաջացրեց ընթերցողների հետաքրքրությունը: Այս վեպը սկիզբ է դրել «նոր ժուռնալստիկայի» զարգացմանը և ստացել նոն-ֆիքշն անվանումը: Թրումեն Կապոտեի ոչ գեղարվեստական ստեղծագործությունները անհերքելի գրական և պատմական արժեք ունեն, բայց մինչ օրս դրանք քիչ են ուսումնասիրվել: Այս տեսակետից Ն. Գ. Մկրտչյանի ատենախոսությունը խիստ արդիական է:

Ատենախոսության ուսումնասիրության առարկան է Թ.Կապոտեի ոչ ֆիկցիոնալ ստեղծագործությունների ժանրային ինքնատիպությունը:

Աշխատանքի գիտական նորույթը: Կապոտեի ստեղծագործությունները ուսումնասիրվել են մի քանի տասնամյակ անընդմեջ, բայց մինչ այսօր որոշ ասպեկտներ մնում են ամբողջությամբ չուսումնասիրված, չկան հեղինակի ոչ

ֆիկցիոնալ ստեղծագործությունների առանձնահատկությունները բացահայտող սպառիչ հետազոտական աշխատանքներ:

Ատենախոսության մեթոդաբանությունը հիմնված է Ժ.Ժանետտի, Բ. Ուսպենսկու, Թ. Վուլֆի, Վ. Շմիդի և այլ գրականագետների տեսությունների վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից /իրենց ենթագլուխներով/, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 128 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ներածությունում կարևորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության թեմայի ռաումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են նպատակն ու խնդիրները, հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, ձևակերպվել է ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը:

Առաջին գլխում /«Переосмысление нон-фикшна в США во второй половине XX века»/, որը ներառում է չորս ենթագլուխ, քննվում է Կապոտեի վեպերի և ակնարկների ստեղծման մշակութային և պատմական համատեքստը, «Սառնասրտորեն» /«In cold blood»/ վեպի դերը նոն-ֆիկշն ժանրի կայացման և զարգացման գործում, փորձ է արվում սահմանել «նոն-ֆիկշն» հասկացությունը: Հեղինակը ներկայացնում է Կապոտեի ոչ գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծության մեթոդները և հիմնական հասկացությունները:

Երկրորդ գլուխը /«Жанровые особенности нон-фикшн романа «Хладнокровное убийство»»/ բաղկացած է երեք ենթագլխից: Անդրադարձ է արվում «Սառնասրտորեն» վեպի ստեղծման նախադրյալներին: Վերլուծվում են ֆոկալիզացիայի առանձնահատկությունները, տեմպորալ հնարքները, պարատեքստի դերը ժանրի ձևավորման մեջ: «Սառնասրտորեն» վեպը դիտարկվում է որպես սոցիալական ակնարկ: Առանձնակի ուշադրություն է հատկացվում Թ.Կապոտեի ոչ ֆիկցիոնալ ստեղծագործությունների նարատոլոգիական մանրակրկիտ և հիմքային վերլուծությանը:

Երրորդ գլուխը /«Истоки творческого метода Трумена Капоте и его эволюция»/ ունի երկու ենթագլուխ: Անդրադարձ է արվում «The Muses are Heard» /«Մուսաները լսվում են»/ ակնարկին, որը Կապոտեի առաջին փորձն է «նոր ժուռնալիստիկայի» ժանրում, և «Music for chameleons» /«Երաժշտություն քամելեոնների համար»/ ժողովածույի գեղարվեստականի և ոչ գեղարվեստականի հարաբերակցությանը:

Եզրակացություն բաժնում ներկայացվել են ատենախոսության հիմնական արդյունքներն և եզրահանգումները:

Առանձնահատուկ ուզում ենք ընդգծել և առժնորել ատենախոսության 2-րդ գլուխը, որը աչքի է ընկնում հմտորեն կատարած գրականագիտական վերլուծությամբ: Ատենախոսն իր ուսումնասիրության արդյունքներով հաստատում է հասուն գիտական գործունեություն ծավալելու ունակություն, ինչպես նաև կոնկրետ փաստերի, տվյալների ու սկզբնաղբյուրների հետ աշխատելու կարողություն, մեծածավալ գրականության մանրակրկիտ վերլուծության հմտություն:

Սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ամփոփելով, կարելի է ասել, որ Մկրտչյան Նարեի ատենախոսությունը լուրջ գիտական աշխատանք է, որը կհետաքրքրի տարբեր բնագավառներում աշխատող գրականագետներին:

Աշխատանքը առավել կատարյալ տեսնելու համար կցանկանայինք նշել մի քանի դիտարկում.

- Ատենախոսության մեջ հղումները տրվում են տողատակերում, այլ ոչ թե տեքստում, գրականության ցանկի համարը նշելով /տես՝ «Ատենախոսության ձեվավորման պահանջները» - https://www.bok.am/templates /
- Խոսելով ԱՄՆ-ում ոչ ֆիկցիոնալ գրականության ձևավորման մասին, Ն. Մկրտչյանը չի հիշատակում ժանրի ակունքներում կանգնած Թոմաս Մայնխենին (Boy and Girl Tramps of Amerika, 1934),

Մաքսին Դևիսին (The Loost Generation. A Portrait of American Youth Today, 1936 թ.), Էդմունդ Ուիլսոնին («The amtrikan Zitters», 1932):

- 17-րդ էջում Ն.Մկրտչյանը գրում է. «С момента выхода роман "Хладнокровное убийство" имел мировой успех и стал примером для подражания...»: Արդարության համար պետք է նշել, որ Միացյալ Նահանգներում այս վեպը ոչ բոլորի կողմից է ընդունվել, դրա մասին խոսում է նաև Թոմ Վուլֆը, որին բազմիցս հիշատակում է հետազոտողը իր աշխատության մեջ. «Նոր լրագրությունը հանդիպեց նույն խոչընդոտների, ինչ վեպը 18-րդ և 19-րդ դարերում: Երկու դեպքում էլ նոր ձևավորվող ժանրը դիտվում էր որպես մակերեսային, զուտ զվարճալի... իբր այն պատշաճ կերպով չէր պաշտպանում բարոյական արժեքները և դրան վիճակված չէր երկար ապրել: » (Տե՛ս Вульф Т. Новая журналистика и антология новой журналистики. URL: https://coollib.com/b/195937-tom-vulf-novaya-zhurnalistika-i-antologiya-novoy-zhurnalistiki/read)
- Աշխատության 29-ից - 40-րդ էջերում մանրամասն բացատրություն է տրվում մի շարք հասկացությունների, ինչպիսիք են՝ տեսանկյունը, անախրոնիան, պարատեքստը և պատմողական աստիճանները: Կարծում ենք, այս հասկացությունների այդչափ մանրամասն բացատրության կարիք չկա:

Վերը նշվածն ամենևին չի նվազեցնում ատենախոսի կատարած ուսումնասիրության արժանիքները: Ուսումնասիրությունն առանձնանում է գիտական հստակությամբ, նորույթի հիմնավորվածությամբ, եզրակացությունների ճշգրտությամբ: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ գիտական ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Կարծում ենք, որ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար

ներկայացվող պահանջները, ատենախոս Նարե Գագիկի Մկրտչյանը արժանի է Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ատենախոսությունը քննարկվել է և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Արտասահմանյան գրականության ամբիոնի 2022 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 5 նիստում՝ բ.գ.դ, պրոֆեսոր Ռ. Թադևոսյանի, բ.գ.թ., դոցենտ Կ. Խանյանի, բ.գ.թ., պրոֆ.պ. Ս. Նուրալովայի, բ.գ.թ., դոցենտ Ի. Սարկիսյանի մասնակցությամբ:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ

բ.գ.դ., պրոֆեսոր ՌՈՒԶԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ռուզան Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտական քարտուղար, մ. գ. թ., դոցենտ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ

8-ը դեկտեմբերի, 2022թ.